

ՄԵՆԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօրեայ օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

«Կվալի»-ի խմբագրութիւնը սրանով յայտնում է իր ընթերցողներին և աշխատակիցներին

ԳԵՕՐԳԻ ԵՖԻՄԻՉ ԾԵՐԵԹԵԼԻԻ

մահւան մասին: Հոգեհանգիստը նշանակված է ամեն օր, ցերեկվայ 12 ժամին և երե-
կոյեան 7 ժամին «Կվալի»-ի խմբագրատան մէջ (Արտիքիքիսկայա, № 5):

Անատոսիա Միխայլովնա Թուստուսովա-ԾԵՐԵԹԵԼԻ, եղինա և Ակակի ԾԵՐԵԹԵԼԻները
խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին առաջինը՝ իր թանգազին
ամուսնու, իսկ երկրորդը իրանց անմոռանալի հօր՝

ԳԵՕՐԳԻ ԵՖԻՄԻՉ ԾԵՐԵԹԵԼԻԻ

մահւան մասին: Ամբիճը կը կատարվի ամեն օր ցերեկվայ 12 ժամին և երեկոյեան 7
ժամին. Արտիքիքիսկայա փողոց, № 5, սեփական տունը:
Յուզարկաւորութեան մասին կը յայտարարվի առանձին:

Խաչատուր Ստեփանեան Տէր-Խաչատրեան և Բագրատ Ռոստոմեան Ամիրզեան
սրբի ցաւով յայտնում են իրանց բարեկամներին և ծանօթներին առաջինը՝ իր անմո-
ռանալի կնոջ, իսկ երկրորդը իր թանկագին քրոջ՝

ԵՓԵՄԻՆ ՌՈՍՏՈՄԵԱՆ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ ամիս 11-ին: Յուզարկաւորութիւնը տեղի կունենայ այսօր,
ամիս 13-ին, առաւօտեան ժամի 10-ին, իր բնակարանից, Արտիքիքիսկայա փողոց, տ. № 9,
Պէտլի Զգրաշէնի ս. Աստուածածին եկեղեցին և այնտեղից Սոջիկանքի գերեզմանա-
տունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բաց թողնելը առիթ է. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլը, ինչպէս և Վէրքեր երկրպագութի մասին.
Գլխաւոր կողմէսի նիստը, ինչի որբանոց թէ
ոչ. երկրպագութից ձեւաւորման օգտին. Ներ-
քին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ար-
տաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Եւրօպա-
կան մարքի և գրականութիւնից.

ԲԱՅ ԹՈՂԱՆԻՔ ԱՌԻԹԸ

Ներկայ յունվար ամսի 4-ին բացվեց
Մօսկվայում մի համառուտական ժողով:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄՏՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

XIX դարը

«Սիրտը լիցալիտում, իսկ միտքը
վերանորոգում է»:

Յօժ բրաւ

Գործնական մի տարի և միամտամանակ ամբողջ
մի դար, բազմաբովանդակ և եռուն հոսանք-
ներով ի մի դար, յաւիտենական անդունդն է
զորովում: Մի կողմ թողնելով այն վիճակի ինչ-
որք, թէ երբ է վերջանում XIX և երբ
սկսվում XX դարը (աւանդական-ժամանակա-
գրական տեսակէտից՝ նոր դարը սկսվում է
1900-ին, իսկ գիտական-մաթեմատիկական տե-
սակէտից՝ 1901-ին) — պէտք է նկատել, որ XIX
դարն արդէն պատմութեանն է պատկանում.
այնպէս որ նրա պատկերը կարելի է հենց այժմ
էլ ուրուագծել:

Գուցէ ոչ մի դար այնքան չափ յատկանիշ-
ներով չէ մկրտուած, ինչպէս XIX-ը — մեքենա-
ների, երկաթուղիների, տեղակալի, բնա-
կան գիտութիւնների, բնապիտան, անհատա-
կանութեան և այլն: Բայց այս բոլոր յատկանիշ-
ներն ընդհանրացնելով և ի մի ամփոփելով
կարելի է XIX դարը անուանել մարդկային մտքի
բարձրագոյն յաղթանակի դարը: «Ոչ նապօթնի»
հանձարեղ ազգամարտիկներ և ոչ Բիսմար-
կի նրբամիտ քաղաքագիտութիւնը պիտի յե-

որի նպատակն է պարզել գիւղատնտես-
ական կրթութեան վերաբերեալ հար-
ցերը և այդպիսով հարթել ձանապարհ
այդ կրթութեան բարձրման համար: Ժո-
ղովք՝ պարագմունքների ծրագիրը կազ-
մված է լիակատար կերպով և ամփոփում
է իր մէջ գիւղատնտեսական գիտութիւն-
ների տարածման բազմաթիւ եղանակ-
ները: Գծարկաւորաբար այդ ժողովին ոչ ոք
ներկայ չէ եղել Անդրովկասից և ուրեմն ոչ
ոք չէ ներկայացրել մեր երկրի առանձնա-
յատկութիւններից բխած այն պահանջ-
ները, որոնց պէտք է լիութիւն տան մեր
երկրի զարգացմանը:

տաքայ սերունդների համար դարաշրջան կազ-
մող վարկանքներ համարվեն, այլ չօգնեցին
նայի առաջին սուրբը, հեռագրութեան առա-
ջին բարբառը և ոչ մի անկարելիութիւն չը
ձանաչող տեղանիշայի հակադրական առաջադե-
մութիւնը — նկատում է Հ. Քրեմլեր «Politische-
und kulturgeschichte des 19 Jahrh.» գրքում:
Մարդկային միտքն ըմբռնելով և ձանաչե-
լով բնութեան ոյժերն ու տարրերը՝ տիրա-
պետում, հպատակեցնում է նրանց: Եւ ահա
կարծես տիրանալի մի սերունդ է առաջա-
նում, որ խորաւ ինքնավարութեամբ և
վերամբարձ թոնջներով ձգտում է աստուած-
ների ձեռքից երկնային կայծը յափշտակել և
յաղթութեան զննալի ազդեցութեամբ ու պրո-
մէթէոսեան մարդկանքներով իր փառքն անմա-
հալելու... Եւ մարդկային մտքի ոյժը փայլում է
ոչ միայն տեղանիշայի արագընթաց առաջադե-
մութեան և բնական գիտութիւնների յաղթա-
կան նուաճումների մէջ, այլ և ամբողջ իրա-
կանութիւնը, ամբողջ աշխարհը կրում է այդ
մտքի, այդ ոգու տիրապետութեան կնիքը:

Շնորհազոյն ժամանակների ամենամեծ փիլի-
սոփան՝ Կանտը, XIX դարու շեմքում «տարա-
ծութիւնը» և «ժամանակը», ճիշտափոխական
այս ամենավտանգաւոր ուրուականները՝ յայ-
տարարում է իբրեւ մարդկային ոգու փունկ-
ցիծներ, և այսպիսով «յաւիտենականութեան»
աճարկութիւնը, ամբողջ աշխարհում — նկա-
տում է Կանտին լուսաւոր ձանադողներից մէկը՝
Քրոնշտեդտի, Բարոյական հասկացողութիւնների
չըջանում գերբնական ոյժը, կրօնական հիմնա-
քարը, իբրեւ աղբիւր օրէնքի և բարոյակա-

նրկու ամիս սրանից առաջ, երբ Թիֆ-
լիսի «Փառքի», ամենաբարձր բացված էր
գիւղատնտեսական զարգացմանը. զործու-
նէութեան յատուկ ցուցահանդէս՝ մենք
յայտնեցինք այն միտքը, որ ցուցահանդէս
կազմողները պէտք է օգտվեն դէպքից և
մանրամասն քննութեան ենթարկեն մեր
գիւղատնտեսական կրթութեան նուիրված
հիմնարկութիւնների փորձերը, որպէսզի
ապագայ կրթական բարեփոխութիւնների
համար պատրաստվեն նպատակաւոր
ծրագիրներ: Այդ չէդաւ: Այժմ մի ուրիշ,
աւելի ևս հեղինակաւոր և լուրջ ժողով,
որին մասնակցում են Ռուսաստանի զանա-
զան մասերից ներկայացուցիչներ, անցաւ
առանց կովկասցիների ներկայութեան:

Համառուտական ժողովը առաջնակարգ
տեղ է տուել գիւղատնտեսական գիտելիք-
ների տարածելու եղանակների և կանոնաց
գիւղատնտեսական կրթութեան խնդրի
քննութեան: Թէ՛ կառավարչական շրջան-
ները և թէ՛ զաւառական ինքնավարու-
թեան օրգանները, այն է գեմալօի հի-
մնարկութիւնները, էպպէս հետաքրքրված
են ժողովի պարագմունքներով: Կառավա-
րութիւնը համակրութեամբ վերաբեր-
վելով գիւղատնտեսական կրթութեան բաց
է անուժ մի շարք զարգացման խնդիր-
ներով: Թէ՛ առաջինը և թէ՛ միւսները վա-
ղուց հետաքրքրված են այդ հարցերով, թէ՛
ինչ ձեւով պէտք է կազմակերպել այդ դը-
պրոցները, որ նրանք տան իսկապէս լուրջ
և զործնական գիտութիւն ժողովրդի ձեռ-
քը:

Այդ հարցերը հետաքրքրական են և
մեզ համար, բայց մենք մեզ հեռու ենք
պահել նրանց քննութիւնից, մեր հասա-
րակութեան մէջ տիրող անտարբերութեան
շնորհիւ: Պէտք է աշխատել կորցրածը
կարելիին չափ հաւասարակշռել եռանդուն
զործունէութեամբ դոնէ այսուհետեւ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Նոր դարագլխի մասին եղած վէճերը շա-
րունակվում են, բայց դա, ի հարկէ, ոչ մի

նութեան նոյնպէս տապալում են և տեղի
տալիս պատմական-բնագիտական ըմբռնմանը:

Ոչ միայն այդ. մարդկային մտքի զօրու-
թեան առաջ դասադուրի եղաւ նոյն-իսկ Աս-
տուածը. մեր դարու սկզբում Փաշլեբաթը հա-
մարձակ կերպով պնդում էր, որ ոչ թէ Աս-
տուած է ստեղծել մարդուն, այլ մարդ ինքն է
ստեղծել իր Աստուծոյ:

Մարդկային մտքի և «ես»-ի ինքնիշխանու-
թեան ամենախորիւմ օրհներգը Ֆիխտեի հե-
տեւեւս անմոռանալի տողերումն է հնչում.
«Ես բարձրացնում եմ իմ գլուխը խիզախ կեր-
պով դէպի հակա, ապառաժ լեռնաշղթաները,
դէպի աղմկայոյց ջրվեժը, դէպի որոտալից և
հրեղէն ուղիւնոսում լողացող ամպերը, և ա-
ղաղակում ես և մ յաւիտեան և գիմարում
եմ ձեզ... Եթէ բոլորդ իմ գլխիս որոտաք, եթէ
երկնքն ու երկիրը իրար խառնվեն և բոլոր
տարրերը անց պայքարի բռնվեն՝ այն վերջին
արեգակնային փոշին, որ ևս ամբողջովին իմ
եմ համարում, իմ կամքը՝ համարձակ և ան-
վեհեր հաստատութեամբ կը լողայ շարունակ
տեղեկերի փառասկներէից վեր — որովհետեւ ևս
իմ գիրքն արդէն ըմբռնել էմ ևս աւալելի
տեսական է քան թէ դուք. սա յաւիտենական
է, ինչպէս և ինքս յաւիտենական եմ»:

Չը նայելով մարդկային մտքի մեծ յաղթա-
նակներին XIX դարը ամենամոռաց յոռետե-
սութեան (pessimismus) դարն է: Կեանքի ու-
նայնութիւնը երբեք պնդելիս սրտածմբիկ ոչ-
բով չէր երգված՝ ինչպէս մեր դարում: Յոռե-
տեսութիւնն ընդհանրապէս առաջ է գալիս
մարդու ներքին, հոգեկան աշխարհի և ար-

արդեք չէ, որ նոյն-իսկ այն մարդիկ, որոնք
համոզված են թէ գեւ XIX դարում ենք ապ-
րում՝ խօսեն յաջորդ հարկաւորական մասին:
Գալիս է անձանթ, վերին սաստիսանի հեռա-
քրքրական հակա, որ ոչ գիտէ ինչ ևս ինչ ոչ-
մեր ունի իր մէջ թագցրած: Բնական է օր
օրի վրա սաստկացող անհամբերութիւնը այդ
հակայի վերաբերմամբ, և շատերը աշխատում
են՝ որքան կարելի է գրական ու հեղինակաւոր
ոճով ասել, թէ առաջիկայ հարկաւորականում
անպատճառ այս ու այս կը լինի: Հետաքրքրա-
կան է այն գուշակութիւնը, որ անուժ է «Ին-
դիա» շարժաթերթը: Նրա ասելով՝ ամբողջ
XX դարը կը լինի գերմանական և սլաւոնա-
կան ազգերի կատաղի մրցութեան նախաա-
րանը: Եւրոպական միւս ազգերը — բոսնական,
նոյն-իսկ անգլո-սաքսոն ցեղերը — որպէս թէ
տեղ չունեն միջազգային ասպարէզում, ամենից
մեծ ու հակադէպ կը լինի գերմանականը:
Ինչն է նրա ոյժի գաղտնիքը:

Այժմ աշխարհ չարժողը, դժբախտաբար,
անտեսական մրցութիւնն է առաւելագէտ
Մեծ դադափաղները, արագան իդէալները,
որոնք մի ժամանակ բարձրացնում էին
մարդկութիւնը և իրանց հետեւողներին
անխորտակելի ոյժ էին հաղորդում՝ տեղի
տուին փոխանակաբերին, բոսայական յայ-
տաքերին, այս կամ այն արժէթովը
բոսանքի պաշտօնական ցուցանիշի մէջ
մոցնելուն: Ուսակարգ արշաւանքի համար
այժմ մարդ չես կարող հաւաքել. այժմ կը
կուեն ոսկու, քարածուխի, բամբակի, ա-
ռեւարական դաշնագրի, այս կամ այն տա-
րիֆի համար: Այստեղ ուժեղ է միայն նա,
ով էժան գնով ապրանք է պատրաստում
համաշխարհային շուկայի համար և կարող
է, եթէ հարկաւոր լինի, թողանքներով և
սուկններով պաշտպանել իր առեւտուրը,
հարկաբեր իր իրանից աղբանք առնեն, իր
հեռ առեւտրական դաշնագրի կնքեն:

Անյայտ է մնում, թէ ինչու միմիայն այս
շարժիական պաշտամունքը պիտի լինի XX
դարի հոգին, ինչու անկարելի է ներթափանցել,
որ մարդկութիւնը կը գտնէ նաեւ դադափաղնե-
րին ու իդէալներին ծառայելու աւելի լայն ու
մեծ ձանապարհ: Բայց մենք չը քննենք այդ
հարցը. իւրաքանչիւր գուշակութիւն ամենա-
նախաոր ճշարտութեան մի կաթիլ կարող է
պարունակել իր մէջ: Այժմեան ժամանակ Գիւր-
մանիան հակադրական քայլեր է անում անտե-
սական ասպարէզում:

Ասկնք որ այդ դարմանալի ամբողջութիւն-

տաքին միջավայրի մէջ ներդաշնակութիւն
ստեղծելու անկարելիութիւնից. այս անհեր-
դաշնակութիւնն, այս ընդհարումն է այն պղղ-
տոր աղբիւրը, որից մնում է «տեղեկա-
կան տառապանքի» սեւ ուրուականը: Բայց
յոռետեսութիւնն, իբրեւ աշխարհայնացք՝
երկու տարբեր արտայայտութիւններով է ե-
րեւան գալիս, մի կողմից իբրեւ առօրեայ նիւ-
թական հոգսեր, արտաքին ճնշող հանգամանք-
ների ծնունդ. միւս կողմից նա կարող է դուռ
փիլիսոփայական բնաւորութիւն ունենալ. տիե-
զերէ յաւիտենական անգիտութեան, կեանքը՝ իր
մոռաց խորհրդաւորութեամբ և ողբերգութիւն-
ների ողբերգութիւնով, մանաւանդ ահարկու
իրականութիւնը, վերջապէս այս բոլորի վերջ-
նական նպատակը — ահա այն վիթխարի սիւնը,
որոնց վրա ամրանում է փիլիսոփայական յոռե-
տեսութեան շէնքը:

Յոռետեսական այս կրկնակի հոսանքները,
մի կողմից՝ սկսած բոսանալից մինչեւ Ծօ-
պէնհատէր, միւս կողմից՝ լիբերալիզմից մինչեւ
բանաւորական հրատապ խնդիրը՝ փոփոխակ
յաջորդականութեամբ բերաւ զայնքան XIX դարի
ամբողջ ընթացքում: Այս յոռետեսութեան դարի
կարելի չօգտիւն ևս առհասարակ XIX դարի
ոգին ամբողջութեամբ և խոր կերպով ըմբռնե-
լու համար անհրաժեշտ է անցնել 3—4 դարե-
րի վրա մի ընդհանուր հայեացք ձգել:

Իւլիուս Հարթը, գերմանացի երիտասարդ,
համակրելի և տաղանդաւոր քննադատներից
մէկը, իր մի քանի ամիս առաջ լոյս տեսած
«Der neue Gott» (Նոր աստուածը) գրքովը
փորձում է Եւրոպայի պատմական-կուլտուրա-

ների հետ այնպիսի տիրույթ է գաղափարա-
կան խնդրությունները, եւ մասնաւոր չըջանա-
տեղադրութեամբ համարեալ կատարեալ
բացակայութիւն է: Գերմանական հանձարի
ամբողջ ոյժը այժմ ձգտում է համաշխարհա-
տնտեսական եւ դրա հետ կապված քաղա-
քական տիրապետութեան: Գերմանիայի նը-
շանակութիւնը մարդկութեան ընդհանուր
հոգեկան տնտեսութեան մէջ սարսափելի
կերպով ընկել է այն փոփոխութեան
ստացաւ գերմանական միութիւնը: Ոչ մի
մեծ, ոչ մի բուստ, որ, անհրաժեշտ էր
գուրս եկաւ: Գերմանիայից, սկսած մեծ վար-
պետ Բիսմարկի ժամանակից, այն մարդու,
որ իր պատկերով եւ գաղափարներով ծած-
կեց անցած օրերի թէ գիտութիւնը, թէ փի-
լիսոփայութիւնը եւ թէ բանաստեղծութիւնը:
Գերմանական հին գաղափարականութեան
վրա կարծես վարագոյր գցվեց, կարծես այդ
գաղափարականութիւնը ոչնչացրեցին է իրեն
անհարկաւոր բան: Եւ ճիշտ որ այդպէս էլ
պիտի լինի: Կամ պէտք է երկար տիրապե-
տութիւն տարածել աշխարհի վրա, ամբողջ
հին աշխարհում ճանապարհներ հարթել գեր-
մանացիների համար եւ գոյութեան անտրոյմ
կուր մղել, կամ փիլիսոփայութիւններ անել
եւ աշխարհին հոգեկան մեծ քաջագործու-
թիւններ բաշխել: Պարզ է, որ այս երկու
բանը միացնել չէ կարելի:

Եւ ահա տիրապետական տեղերի այդ
վիթխարի ածնողութիւնը, որի հետ է եւ աղ-
գաքնակութեան աստիկ ածնողութիւնը պիտի
հարկադրէ գերմանացիներին գուրս դալ իրանց
ներկայ հայրենիքի անձուկ սահմանները, տա-
րածվել տեղ որոնել: Բայց ինչ ուղղութեամբ
Դէպի արեւմուտք գնալ չի լինի, այնտեղ ֆը-
րանսիացիներն են եւ բացի դրանից գերմա-
նական սահմանի եւ ուղիւստի մէջ մի շատ
փոքրիկ տարածութիւն է, ուր չէ էլ կարելի
ազատ շարժվել: Միտում են դէպի Հարաւ, դէպի
Թիւրքիա եւ դէպի Արեւելք տանող ուղղու-
թիւնները: Իսկ այդտեղ որսնալիս տարին
է կանգնած, Բուլղարիայի դրանց մէջ անկա-
ստիկ է: Ուր է պատկանում աշոգութիւնը
այդ ընդհանրապէս մէջ: Շարքաթիւններ չէ կա-
րողանում ասել, թէ պաշտօններն է աշոգու-
թիւնը:

Կուլտուրական կուրը այժմ գոյց է մեզ
համար եւ անհայտն է, որովհետեւ այդ
կուր առաջին պայմանն է մի ւրիւնը,
իսկ այդ հիմնական տարրից ոչ ոք պնդան
կատարելապէս չէ գրկված, ինչպէս մինչեւ
Բայց երբ կը լինի այդ միութիւնը այն ժա-
մանակ կուրը չէ կարող չը սկսվել, այն էլ
սուր կուր, որովհետեւ գերմանացիներ իրեն
համաքաղաքացի, ամեն տեղ յայտնի է իր
գարմանայի անհամբերողութեամբ: Եւ ըն-
տրեալ ցեղ է, իսկ նրան չըջապատողները—
սուր ցեղեր են:

Ազգային ճիշտ որ մրցութիւններ, ազգայ-
նական ընդհարումների ժամանակ կը լինի մեր
դարը յարուցեց ազգայնական սկզբունքը, բայց
չը կարողացաւ լուծել այն հանգիստ բարդու-
թիւնները, որոնք առաջացան դրանից: Շատ
յուսահատական կը լինէր այդ անեղ մրցու-
թիւնների հետեւալը: Եթէ նկատելի չը լինէր
եւ այն, որ ազգային չօլիւնիզմի հետ գոյութիւն

կան կենսաբ. վերածնութիւնից սկսած մինչեւ
XX դարը հոգեբանական վերածնունդ ենթադ-
րել: Չը նայելով հեղինակի բանաստեղծական
զգայուն բնաւորութեանը, չը խաչելով, որ իր
գիրքը համարեալ սկզբից մինչեւ վերջը քնար-
երգական զեղումներով է համաձայն, այնու-
ամենայնիւ պէտք է նկատել, որ նա կրում է
իր մէջ մի ուժեղ փիլիսոփայական երակ եւ
որ վերջիվերջ հոգեբանական վերածնունդ նուրը
գործը նրան շատ գեղեցիկ կերպով է աշուղդել:
Հետեւելով Հարտի գրքին՝ առաջ ենք բե-
րում վերջին 3 դարերի բնորոշ ոգին եւ այ-
նուհետեւ կանցները դէպի XIX դարը:

Նոր ժամանակների շնորհիւ սերնդ, ասում է
Հարտը, XVI դարու մարդն է: Մենք հասկա-
նում ենք նրան կատարելապէս, մենք գիտ նը-
բան շատ մօտ ենք, մեր դարը ամփոփում է
վերածնութեան կուլտուրայի վերջալոյսը, այն
կուլտուրայի, որ 3 դար առաջ երեւան եկաւ
իրբեւ թարմ արշալոյս պատմական մատակա-
պատ հօրեղանի վրա:

Վերածնութեան դարը յոյերի եւ կրեքերի,
ոյժի եւ եռանդի, դիմադրական կամքի եւ կեն-
սուրբան արքամագրութեան դարն է: Այս դա-
րու սերունդի հակադրողութեամբ՝ կենսաբ. մի
զգայական, կենդանի բնաւորութիւն էր կրում:
Եւ անհասարակ ամբողջ աշխարհը նրանց գի-
տում էին գերարուեստական զգայնութեամբ—
փառ, անհարձակ երեւակայութեամբ եւ բու-
ռն տենչանքներով: Աշխարհը նրանց թուում
էր իբրեւ կախարդական պղնձաքնով դար-
դարված մի գեղեցկուհի: Միջին դարը թէն
նոյնպէս զգայական հայեացքով էր նայում «աի-

է պահպանում եւ հանրամարդկային եղբայրա-
յութեան գաղափարը: Եւ ով գիտէ, այս վեր-
ջինը այնքան չի զարգանալ, որ մեղմացնէ,
գոյց է եւ վերացնէ ցեղական եւ ազգային ընդ-
հարեւները...

Չորս չեն ասում, որ կրօնի հեղինակու-
թիւնը ամենից շատ գոյում են հէնց կրօնի
պաշտօնականները: պատմութիւնը մէջիմաստ
փաստերով ապացուցանում է այս իրողութիւ-
նը: Եւ եւ մի փոքրիկ, ժամանակակից փաստ
վերահսկելի Միլիթարեան միաբանութեան
անդամներին Մեքսիկոյ վ. ձերմակեան, որ
քսան տարի առաջ մայրենի եկեղեցուց վեր-
կը վերադարձած էր՝ այս անգամ զարձակ
հայ-հուլիմիականաց եկեղեցին ընդունել է:
ձերմակեան վարդապետ իր առաջին պատա-
րագր մատուցել է:

Ինչ հեշտ է եղել եկեղեցուց եկեղեցի
գնալ—վերադառնալ: Շատերը իրանց ձեռնոց-
ները անցած այսքան հեշտ կերպով չեն բա-
ժանվում: Կրօն, գաղափար, հաստատմանու-
թիւն հաստատվողներ...

ԻՆՏԵՆՏՆԻ Վ. ՎԵՐԵՐԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ

Մենք ասելով ունեցանք խօսել ընտանիքն ին-
տենտ Վ. Վերերի հետ, որ գնացել էր Ախալ-
քալքի գաւառի երկրաշարժի վնասված տե-
ղերը գեօլոգիական ուսումնասիրութիւններ ա-
նելու: Երաւարտութեամբ Առաջ ենք բերում մեր ստա-
ցած տեղեկութիւնները:

Երկրաշարժի չըջանում արդարեւ տեղի են
ունենում մեծ ու փոքր ճեղքումներ եւ հողի
պտտումներ, բայց ձիւնը նրանց ծածկել է
եւ նրանց ուսումնասիրութիւնը կարելի է կա-
տարել միայն այն ժամանակ, երբ ձիւնը կը
հալի եւ կը վերանայ: Թէ ինչ փոփոխութիւն-
ներ են եղել Տարաշուր լճի շուրջը՝ նոյնպէս
այժմ անկարելի է որեւէ որոշ բան ասել:
Վերեր ժողովել է մանրամասն տեղեկութիւն-
ներ երկրաշարժի ցնցումների մասին: Գիւղա-
ցիները տուած պատասխանները երբեմն հակա-
ռական էին լինում միեւնոյն օրվայ եւ միեւ-
նոյն տեղի մասին: Այն ժամանակ նա ժողու-
մում էր ասել մեծ թիւով վկայութիւններ եւ
կազմում հաւանական հաւացք եղելութեան
մասին:

Բարալեթի չըջանում գեօլոգների կարծիքով
հողի հիւքը դրված է նստած լեռների վրա:
Հետաքրքրական կը լինի գործնական հետազոտու-
մի: Գիւղերի տակ գտնվող լեռնային պատմական
էն եւ համեմատել վնասված գիւղերի տակը՝
անվնաս մնացածների հետ: Վերերի կարծիքով
գիւղերը նպատակադարձաբար է թողնել նախկին
հողերի վրա եւ միայն միջոցներ ձեռք առնել
նրանց անվնաս գործնական: Կարելի է բնորոշ
գիւղերի համար ասել, որպէսզի տեղեր եւ ին-
տենտները ասելի խելացի կերպով, քան այժմ
գոյութիւն ունի: Եւ չափել է կոտորների հաշ-
տութիւնը եւ գտել, որ նրանք ունեն մինչեւ

կին աշխարհի» վրա, բայց վերջինս նրա աշ-
քին թուում էր ոչ թէ իբրեւ մի գրաւիչ եւ
յափառակող գեղեցկուհի, այլ գալթակցութեան
թոյնով լի մի վնաս:

Համարեալ ոչ մի դարում մարդկային ստեղծ-
ագործող ոգին, երեւակայութիւնը, այնքան
ուժեղ եւ բազմաբովանդակ կերպով չէ փայլել
ինչպէս վերածնութեան դարում—կրօնի եւ
հասարակ առաքելային, հանձարեղ նկարչներ
եւ բանաստեղծներ—ահա այդ դարաշրջանի
պտուղները: Նոյն-իսկ գիտական հումա-
նիտը մեծ պարծանք էին գոյում լեթ չըջա-
պատողներից նրանք նոյնպէս մի «թօթա» հա-
մարտէին—այն-ինչ մեր դարում՝ կրօնը,
արուեստը եւ բանաստեղծութիւնն ընդհակա-
ռակն աշխատում են ըստ կարելոյն «դիտա-
կան» բնաւորութիւն ունենալ:

Երեւակայութեան այս նշանաւոր դարում
ստեղծագործող ոգիները ամենաուրա եւ հան-
ձարեղ ընդունակութեամբ նախադրում են հա-
մարեալ այն ուղին, որով պէտք է անցնել ամ-
բողջ նոր եւ նորագոյն ժամանակը, 3—4 դար,
իր բոլոր իդէալներով, մտքով ու զգացմուն-
քով, գիտութեամբ եւ կրօնով: Թոմաս Մօր,
Էրազմ, Լուիեր, Ժօրժանո Բրունո, Շէկսպիր,
Միքէլ Անջելո, Մակիաւելլի, Բէկոն եւ այլն
եւ այլն—անհայտ ասեղեկագործող անմահ ո-
գիները, որոնք մարդկային ցեղի նոր պատմու-
թեան առաջնակարգ կարապետներն են հա-
մարվում:

Վերածնութեան մարդը, միշտ կենդանի,
վառվուն եւ կրքոտ՝ ձգտում էր «տիկին աշ-
խարհի» տէրը լինել, այն աշխարհի, որին սա-
կայն նա երբեք չէր ճանաչում, ոչ թէ «եր»

1½ արշին հաստութիւն. նա կարծում է, որ
կան եւ ասելի հաստ կտորներ: Այդ հաստ կե-
ղեւը, որ կազմված է հողից, ցեխից, ունի մեծ
ծանրութիւն, որ ասելի եւս զգալի է դառնում:
Երբ նրա վրա նստում է ձիւնի հաստ շերտը:
Այդ տեսակ կտորը պէտք է փոխվի հիմնովին:
Ի վերջոյ Վերեր յայտնեց, որ նա գոյց է կա-
րայ մի գիտություն Աշխարհագրական ընկերու-
թեան կովկասեան բաժնում եւ հաղորդէ իր
ժողոված տեղեկութիւնները երկրաշարժի մա-
սին:

ԳԻՆԱՒՈՐ ԿՕՄԻՏԵՏԻ ՆԻՍՏԸ

Երեկ, չորեքշաբթի, յունվարի 12-ին, տեղի
ունեցաւ երկրաշարժից վնասվածներին օգնող
գլխաւոր կոմիտէի չորրորդ նիստը Թիֆլիսի
նահանգապետի նախագահութեամբ:

Նախագահը գեկուցեց, որ անցեալ նիստից
յետոյ, որ տեղի ունեցաւ յունվարի 8-ին, ա-
ւելացել են հետեւեալ գումարները. Շուշուց,
քաղաքապետից 600 ռ., Ե. Երեմեևսկայից
հանգանակութեամբ 200 ռ., Բագուի ժողովա-
րանից 1000 ռ., Սիմֆերոպոլի հայոց եկեղեցու
երեցիութից 500 ռ., Բագուի հայոց եկեղեցու
երեցիութից 600 ռ., «Մշակի» խմբագրութիւ-
նից 4000 ռ., Կաղանկերի կորպուսից 27 ռ.,
Իշխանուհի Բարաթովայից 12 ռ., պահակա-
խմբի ծառայողներից 12 ռ., դամար 6951 ռ.,
որ նախկին գումարների եւ Ախալքալաքում
գտնվող դարմի հետ միասին՝ նույն է մօտա-
ւորապէս 123,000 ռ.:

Կարգադրեց Ախալքալաքի գաւառապետի հե-
ռագրական հաղորդագրութիւնը, որով նա
յայտնում է, թէ մինչեւ այժմ մնում մարդկանց
գիտելիքը դուրս են հանված եւ թաղված 241
եւ փրատակների տակ մնացել են 6. վի-
րաւորված 55, իսկ հիւանդ 110
անձ: Փշացած անասունների թիւն է 2480
գլուխ: Գաւառապետը հաղորդում է, որ գիւ-
ղացիները ինքնակամ չեն հեռանում քանդված
գիւղերից եւ մնում են փրատակների կոյտերի
մօտ, որպէսզի հսկեն իրանց գոյքերի վրա:
Նահանգապետը առաջարկութեամբ կոմիտէի
որոշեց հեռադրել գաւառապետին, որ չէ կա-
րելի ստիպել եւ պէտք է դարձեալ առաջարկել
գիւղացիներին՝ յօժարակամ հեռանալու:
Փրկած անեղում կարող են տեղի ունենալ վը-
տանգաւոր գէպեր, ինչպէս արդէն եղել է
մէկը եւ գիւղացիներից մէկը մնացել է վը-
րաւորների տակ:

Անասնաբույժ Մակարով, որ այսօր, յունվարի
13-ին, ճանապարհ է ընկնում դէպի Ախալքա-
լաք, գեկուցեց, թէ ինչ ձևով է նա մտադրի
օգնացնել անասունների մարմինը: Պէտք է
փորվին հորեր, նրանց մէջ դարձնել վառելիքներ,
օրինակ ցաւ եւ ճնախ, յարց, դարման, նրանց
վրա դիզել մարմինները եւ յետոյ բոլորի վրա
ածելով նաւթ՝ կրակ տալ: Եթէ ամբողջ գէպը
չայլով՝ դարձեալ բաւականաչափ կամխանայ
եւ կը դառնայ անվնաս: Ամեն մի հորում կարելի

աշխարհի, այլ «ուրիշներ» աշխարհի, արտա-
քին աշխարհի: Բայց «նուաճումը» նրան հեշտ
էր թուում, թէ միայն աշխարհը գեկերով
լի լինէր, երկրասարդական թարմութեամբ
առողջ եւ ինքնավստահ համարձակութեամբ
նա իր «եսի» ոյժն էր փորձում: Եւ ահա այս
«գեկերով լի աշխարհը» նրան շատ շուտ սան-
ձաւարեց, նա ընկճվեց, «ուրիշները» խելցին,
օգնացրին նրա «եսի» արագաթիւղ թիւերը:
Այս ընկճմանը, այս պարտութեանը բնականա-
բար պիտի յաջորդէր այն տխուր հիասթափու-
թիւնը, որի մօտայ պատկերը մենք այժմ գը-
տնում ենք Կալեքեօնի բանաստեղծութիւնների
մէջ:

Անհատականութեան եւ երեւակայութեան
դարին յաջորդում է Կոպերնիկոսի, Կէպլերի,
Նիւտոնի, Դէկարտի եւ Սպինոզայի դարը—գի-
տութեան, ճանաչողութեան, բանականութեան
դարը: Արուեստագէտները եւ կրօնի հիմնա-
դիրները տեղի են տալիս բնագիտական եւ
մաթեմատիկականներին:

Կէպլերի եւ Նիւտոնի աշխարհը մի հսկայա-
կան մեքենայ է, մի անեղբւր եւ անհուն աշ-
խարհ. եւ ահա XVII դարու մարդը իր հայեաց-
քը տիեզերքի անհունութեան եւ անեղբւր-
թեան հեռանկարին յառած՝ գգում է իր ոչնչ-
ութիւնը իր «եսի» փոքրութիւնը. անհատա-
կանութիւնը, «արտաքինի» հսկայական ոյժի ա-
ռաջ, լինի դա բնութիւն, եկեղեցի, թէ պե-
տութիւն՝ միանգամայն ընկճվում է: Իր փո-
քրութիւնը ճանաչող այս նոր մարդը անտա-
րակոյ՝ հեղինակութեան եւ օրէնքի, կարգի
եւ կանոնի, հրամանի եւ պատուէրների ծա-
րաւով պիտի պապակէր, եւ մենք տեսնում

է ամփոփել 10—20—30 մարմին: Նախ հար-
կաւոր կը գալ ամեն մի անամի վրա 10
ֆունտ: Բոլոր գիտնականի համար անհրաժեշտ է
620 պուդ կերօտին, իսկ Ախալքալաքում կայ,
ինչպէս հաղորդում է գաւառապետը՝ 1000 պուդ
կերօտին, 100 պուդ մաղութ, 300 մշակ եւ
հարկաւոր գործիքներ: Անհրաժեշտ է միայն
հորերը փորել զգուշութեամբ, որպէսզի նրանք
չը վնասեն ստորերկրեայ ջրերին եւ գիւղերի
աղբիւրներին:

Այնուհետեւ նահանգական բժիշկ Կիկոճէ, որ
նոր վերադարձել էր Ախալքալաքից, արաւ իր
գեկուցումը, որի մասին կը հաղորդենք «Մշա-
կի» հետեւեալ համարում:

ԼԻՆԻ՝ ՈՐԲԱՆՈՑ, ԹԷ ՈՉ

Ախալքալաքի աղէտի առիթով արծարծված
որոշանոց-անկեղծողի հարցը լաւ ընդունելու-
թիւն գտաւ հասարակութեան եւ լրագրութեան
մէջ: Երեւում է, որ մի այդպիսի հիմնարկու-
թեան պահանջ զգացվում է Կոմիտէում:

Ինչն ըստ ինքեան հասկանալի է, որ շատ
լաւ կը լինէր ունենալ մի այդպիսի բան Կով-
կասում եւ ցանկալի է, որ նա լինէր կենտրո-
նական քաղաքներից մէկում, թէկուզ հէնց
Թիֆլիսում: Մեր հարուստներից մէկ երկուր
կարող էին այդ բարի գործը գլուխ բերել ի-
րանց նուէրներով, որով կը թողնէին մի ան-
չնչելի եւ յաւերժական յիշատակ սերունդից
սերունդ:

Գաղով Ախալքալաքի աղէտից մնացած որ-
բերին, պէտք է ասել, որ տեղն ու տեղը հա-
ւաքած տեղեկութիւններին նայած՝ որբերի եւ
սահասարակ անկեղծողի կարիք ունեցող
մարդկանց թիւը շատ սահմանափակ է, որ ան-
հրաժեշտ լինէր յատկապէս նրանց համար ըս-
տեղեկ մի առանձին հիմնարկութիւն: Այդպի-
սինքն լեթ կան գտնվում են իրանց ազգա-
կան-բարեկամների մօտ, կամ կոմիտէի խնա-
մատարութեան տակ:

Այնու ամենայնիւ, պէտք է ասել, որ այժմ
արդէն հաւաքվում են մանրամասն վիճակա-
գրական տեղեկութիւններ որբերի քանակու-
թեան եւ որբութեան մասին, եւ այդ տեղեկու-
թիւնները ունենալուց յետոյ, կարծում եմ, ե-
թէ կարիք լինի՝ կարելի է նորից աստարեղ
հանել նոյն հարցը:

Թիֆլիս. Բ. Գ. Սարգսեան

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱՇՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք երկրաշարժից վնասված գիւղացի-
ների օգուին հետեւեալ նուէրները.

Բագուից 1) տ. Աննա Քալանթարից 260
րուբլի, որ նուիրել են տիկիններ Սաթիկի
Քալանթարեան 50 ռ., Հերիքեալ եւ Անթիկի
Նարայիշեանների 50 ռ., Թագուհի Շիւսից 40
ռ., Աննա Քալանթար 25 ռ., Սօֆիա Գիւլմիս-
րեան 25 ռ., Եւգենիա Քալանթար 10 ռ., Սա-
նիշիկա Ալեքսանդր 15 ռ., Ստաւ Դանդալա-
դեան 15 ռ., Սօֆիա Դանդալադեան 10 ռ.,

ենք, թէ ինչպէս այն մեծ ինքնակալը, որին
Նիւտոն ձգողական ոյժ է անուանում եւ
որը ֆիզիքական երեւոյթներով է արտայայտ-
վում՝ Դէկարտի աշխարհայեացքով հոգեա-
նական բնաւորութիւն է ստանում, դառնում
է միաբ.—«ego, ergo sum»): արամբանու-
թիւնը երեւան է գալիս իբրեւ հոյու՝ եթէ
կարելի է ասել՝ ձգողական ոյժը, որին նոյն-
իսկ Աստուածը անկարող է օգնացնել: Այդ
նոյն ինքնակալ ոյժը Սպինոզայի հանձարեղ
փիլիսոփայութեամբ համաստեղծապէս բնուե-
րութիւն է՝ աստուծո՝ եւ կոչվում է «անհրա-
ժեշտութիւն»:

XVII դարու աշխարհայեացքի մարմնա-
ցումը չօչախելի կերպով նկատելի է մանա-
ւանդ քաղաքական-պետական աստղագրու-
թեան ինքնակալ թագաւորի, roi soleil-ի առաջ ծըն-
կալող խոնարհութեան, այլ բոլոր հպատակները
միջնադարեան եկեղեցական բնականութեանը
յաջորդում է պետական-քաղաքական բնական-
ութիւնը:

XVII դարու մարդը կապված, շղթայված է,
բայց նա չէ զգում շղթաների ծանրութիւնը:
Նա մոլորանդ մտածող է միայն, նա չէ տե-
սում ու բնութիւնը, այլ ճանաչում է միայն մի
բնական օրէնք: Դատողութեան, ստան եւ մա-
քուր բանականութեան անդամահատող ոյժի
առաջ նստանում, թառամում է XVI դարու
զգայական ոգին՝ երեւակայութիւնը. այնպիսի
որ XVII դարի բանաստեղծները իրանց անտեղ
ժագործութիւններով փոխանակ կրքոտ մարդ
գիւղ ներկայացնելու, բաւականանում են միայն
կրքի մասին խորհրդածելով:

(Կը շարունակվի)

Типографія Грузинск. Т.—ва, Большая-Ванская ул., № 27.